

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԸ ԵՒ ՀԱՅՅԵՐՈՒ ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐԸ», ՊԵՂՐԱԼՔ 1970, 344 էջ:

Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին թուրքերու կողմէ հայոց դէմ կազմակերպուած առաջին ցեղասպանութիւնը, երկար ժամանակ յուշադրութիւններու եւ վերապրումներու նիւթ հայթայթելէ ետք, մասնաւանդ վերջին տասնամեակին, դարձաւ քննական լուրջ սերտողութիւններու առարկայ: Հայրենիքի եւ սփիւռքի մէջ հրատարակուեցան բազմաթիւ մեծ ու փոքր ուսումնասիրութիւններ, որոնք փորձեցին լոյսին բերել հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան մութ ծալքերը՝ հայ-թրքական եւ միջազգային յարաբերութիւններու լոյսին տակ: Այս դժով ուշադրաւ մենագրութիւններ հրատարակեցին Ջ. Կիրակոսեան, Ե. Սարգսեան, Ա. Եսայեան, Հ. Ղազարեան, Մ. Արզումանեան եւ ուրիշներ:

Վերոյիշեալ անուններու կողքին, այսօր անվարան կ'աւելցընենք նաեւ Հայկազեան Գոլէճի Հայագիտական Ամբիոնի դասախօսներէն՝ Լեւոն Վարդանի անունը, որուն՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԸ ԵՒ ՀԱՅՅԵՐՈՒ ԼՔԵԱԼ ԳՈՅՔԵՐԸ մենագրութիւնը շահեկան ներդրում մըն է 1915-1922 թթ. հայ ժողովուրդի պատմութեան քննական պատմագրութեան մէջ:

Հատորին ներքին բաժանումը՝ Համաշխարհային Ա. Պատերազմը եւ Երիտասարդ-Թուրքերու Օսմանեան կայսրութիւնը, Թուրանիան եւ Հայկական Տասնհինգը, «Լեւոն Գոյֆեր»ը ըստ Թրքական Վաւերագիրներու, «Լեւոն Գոյֆեր»ը ըստ Միջագոյային Դաշնագիրներու, «Լեւոն Գոյֆեր»ը եւ Հանրապետական Թուրքիան, «Լեւոն Գոյֆեր»ը եւ Հայկական Պահանջները, ինքնին կը բացայայտէ ներկայացուած մենագրութեան ներքին կառոյցը եւ հարցերը պարզաբանելու իր որդեգրած ուղեգիծը:

Առաջին գլուխով հեղինակը կը ներկայացնէ թուրքին իրաւ նկարագիրը, անոր կողոպտելու եւ բռնանալու խորթակը, որ ամբողջութեամբ պիտի դրսևորուէր հայկական կոտորածներու շրջանին: Կը բացատրուի նաեւ կրօնական հարցերու օգտադործումը՝ հայոց դէմ թուրքերու ատելութիւնը սրելու, թէեւ, ինչպէս կը ճշդէ հեղինակը, «թուրքեր ոչ մէկ կրօնական պատերազմ մղած են» պատմութեան մէջ:

Հայկական Տասնհինգը ճշգրտօրէն բացատրելու համար, այսօր աւելի քան երբեք պատմագիրներու ուշադրութիւնը կեդրոնացած է քուրանականութեան հարցի վրայ: Լեւոն Վարդան չէր կըրնար անտեսել դայն: Իր ուսումնասիրութեան ամբողջ երկրորդ գլուխը յատկացուցած է այդ հարցի քննարկման, սկսած թուրանական-

նութեան քարոզչութենէն մինչեւ թուրանականութեան իրագործումի ձգտումով՝ թուրք եւ զերման շահերու համընկնումին, որուն զոհ կ'երթար հայ ժողովուրդը: Հեղինակը կը բացայայտէ թէ հայ ժողովուրդի բնաջնջումով եթէ թուրքիան կը միտէր թուրանականութեան իր երազը իրականացնելու, Գերմանիան՝ կը վազէր տնտեսական իր շահերուն ետեւէն:

Յաջորդ չորս գլուխներուն մէջ, Լեւոն Վարդան խղճամիտ ու գրեթէ սպառիչ կերպով կը զբաղի հայերու լքեալ գոյքերու հարցով: Ըսենք այստեղ, որ մենք պիտի նախընտրէինք բռնագրաւեալ գոյքեր բացատրութիւնը, փոխան՝ լքեալի: Լեւոն Վարդան կը փորձէ պարզաբանել հարցը, հայոց ինչքերուն համար թուրքերու տուած կեղծ երաշխիքներէն սկսած, մինչեւ անոնց բացայայտ կողպտումն ու իւրացումը: Պատմական փաստերու եւ վաւերագիրներու լոյսին տակ հեղինակը կը ներկայացնէ հայոց լքեալ գոյքերու ապրած ճակատագիրը՝ 1915 թ.էն մինչեւ Հանրապետական թուրքիան, երկարօրէն անդրադառնալով միջազգային դաշնագիրներու մէջ անոր բաժին ինկած բախտին:

Իր վերջին գլուխին մէջ հեղինակը փորձել է ետք հայոց լքեալ գոյքերուն դրամական արժէքը դնահատել, իրաւացի կերպով կ'եզրակացնէ. «Բայց ամբողջ հայրենիք մըն էր ետին ձգուածը, իսկ հայրենիքը նիւթով չի դնահատուիր արդէն»:

Իծախնդիր ծանօթագրութիւններով եւ ընդարձակ մատենագիտութեամբ հարստացած այս մենագրութիւնը կը մնայ լուրջ ու ողջունելի աշխատանք մը: